ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XXXIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

2012 թ. հոկտեմբերի 6–7-ը Կոտայքի մարզի Արզական գյուղում գտնվող ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական՝ XXXIII գիտական նստաշրջանը: Այն նվիրված էր ժամանակակից նշանավոր պատմաբան, պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանի ծննդյան 85-ամյակին:

Հոկտեմբերի 6-ին բացելով գիտական նստաշրջանը՝ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ., դոցենտ Կարեն Խաչատրյանը նախ ինստիտուտի աշխատակիվների անունից շնորհավորեց Վ. Բարխուդարյանին, այնուհետև ներկայացրեց գիտական նստաշրջանի նպատակն ու խնդիրները: Վ. Բարխուդարյանի կյանքին և գիտական գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը՝ անդրադառնալով անվանի պատմաբանի անցած ուսանելի կյանքի ուղուն և գիտական վաստակին: Նա կարևորեց նաև երիտասարդ կադրերի պատրաստման գործում Վ. Բարխուդարյանի ունեցած ներդրումը:

Ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, տ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը հատուկ անդրադարձ կատարեց Վ. Բարխուդարյանի գիտակազմակերպչական գործունեությանը: ՀՀ ԳԱԱ համակարգում զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ՝ հոբելյարը վաստակել է գործընկերների սերն ու հարգանքը՝ հայրենանվեր գիտնականի և ազնիվ քաղաքացու հրաշալի օրինակ հանդիսանալով երիտասարդների համար:

Իրենց ելույթներում հոբելյարին բարեմաղթանքներ ուղղեցին Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Էդուարդ Դանիելյանը, Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, պ.գ.դ. Էմմա Կոստանդյանը, Վ. Բարխուդարյանի նախկին ասպիրանտ, պ.գ.թ. Հովհաննես Ալեքսանյանը և ուրիշներ, ընթերցվեց նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի ողջույնի ուղերձը:

Իր ելույթում ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը շնորհակալական խոսքեր ուղղեց ՀՀ ԳԱԱ նախագահությանը, Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքին և Պատմության ինստիտուտի տնօրինությանը՝ երախտագիտություն հայտնելով իր ծննդյան հոբելյանին նվիրված երիտասարդ գիտաշխատողների նստաշրջան կազմակերպելու համար: Այնուհետև նա ջերմ խոսքեր ուղղեց երիտասարդ պատմաբաններին և պատմեց հուշեր ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների առաջին նստաշրջանի վերաբերյալ:

Գիտական նստաշրջանի առաջին նիստում (նախագահող՝ Կ. Խաչատրյան) զեկուցումներով հանդես եկան ինստիտուտի հայցորդ Ալիսա Դումիկյանը («Հայաստանին տրված «Սոմխիթ» անվանման հարցի շուրջ (XIX դ. ֆրանսիական հայագիտության լույսի ներքո)»), հայցորդ Հրաչյա Փանոսյանը («Նախիջևանի վարչաքաղաքական դրությունը հնագույն ժամանակներից մինչև XV դարը»), Մատենադարանի աշխատակից Արմինե Մելքոնյանը («Դավիթ Անհաղթին վերագրվող երկերի վավերականության հարցի շուրջ»):

Նստաշրջանի երկրորդ նիստում (նախագահող՝ Պատմության ինստիտուտի գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյան), ելույթ ունեցան ինստիտուտի ԵԳԽ նախագահ, պ.գ.թ. Արտակ Մաղալյանը («Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատությունը»), հայցորդ Լիլիթ Քոսյանը

(«1890-ական թթ. հայկական կոտորածների արձագանքները «Մուրճ» պարբերականում»), հայցորդ Նարինե Երանոսյանը («Հայկական բարենորոգումների լուսաբանումը եգիպտական «Ալ-Ահրամ» օրաթերթում 1894–1896 թթ.»):

Երրորդ նիստում (նախագահող՝ Ա. Մաղալյան) ելույթ ունեցան ինստիտուտի աշխատակից Ռեգինա Գալուստյանը («Հայոց ցեղասպանության ընթացքում հայ մտավորականության ոչնչացումն ըստ գերմանական և ավստրոհունգարական հրատարակված փաստաթղթերի»), ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը («Հայաստանի առաջին հանրապետության զինված ուժերի սպառազինությունը») և հայցորդ Գագիկ Ժամհարյանը («Առօրեականության բովանդակությունն ու խնդիրները»):

Գիտաժողովի եզրափակիչ՝ չորրորդ նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-ին (նախագահող՝ Ա. Մելքոնյան): Նիստի ընթացքում ելույթ ունեցան պ.գ.թ. Համո Սուքիասյանը («Հայկական ԽՍՀ Շահումյանի շրջանը 1939–1958 թթ.»), հայցորդ Նարինե Հովսեփյանը («Խորհրդային Հայաստանի գյուղի առօրյան Հայրենական Մեծ պատերազմի սկզբնական շրջանում»), հայցորդ Տաթևիկ Մանուկյանը («Հայրենադարձների կեցությունն ու առօրյան Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տարիներին») և պ.գ.թ. Հովհ. Ալեքսանյանը («Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում՝ ըստ 1970 թ. համամիութենական մարդահամարի տվյալների»):

Գիտաժողովի վերջում ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները, նշելով որ գիտաժողովի լավագույն զեկուցումները կտպագրվեն ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի առաջիկա հատորում: